



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ՄՈՆԹԵՊԵՆԵՆՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, Սեպտեմբեր 11ը Խաչվերացի տօնն է, որ միեւնոյն ժամանակ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնն է:

Այս գոյգ տօներուն առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան պատգամը պիտի փոխանցէ Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ: Առաջնորդ Սրբազանը նաեւ պիտի կատարէ մատաղօրհնէքի արարողութիւնը:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ կից «Բաղրամեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ սիրոյ ճաշ պատրաստութեամբ Ս. Խաչ Մայր Տաճարի Տիկնանց Միութեան:

Յայտնենք նաեւ, որ տօնական այս օրուան առիթով, Գերպ. Տ. Միրոն Ծ. Վրդ. Ազնիկեան պիտի պատարագէ Նորթ Հոլիվուտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, իսկ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL ON THE FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS

Sunday, September 11, 2011, is the Feast of the Exaltation of the Holy Cross, which is also the name day of Holy Cross Cathedral of Montebello.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of the *madagh* at Holy Cross Cathedral on this occasion.

A reception organized by the Parish Ladies Guild will follow at "Bagramian" Hall.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Divine Liturgy at the North Hollywood Parish, and Very Rev. Fr. Barthev at St. Garabed Church in Hollywood.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ՉՈՐՇԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ԱՂՕԹՔ ԹԵՄԻՍ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կիրակի, 11 Սեպտեմբերը Վերացման Ս. Խաչի տօնն է, մեր եկեղեցւոյ տաղաւար տօներէն մէկը: Նոյն օրը կը զուգադիպի Նաեւ Նիւ Եորքի, Ուաշինկթընի եւ Փենսիլվանիոյ մէջ 11 Սեպտեմբեր 2001-ին տեղի ունեցած ահաբեկչական արարքներուն 10րդ տարելիցին, որոնք պատճառեցին բազմաթիւ անմեղ զոհեր:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, «Տեր Ողորմեա»-ի յատուկ աղօթք պիտի բարձրացուի անմեղ զոհերուն յիշատակին:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ Ս. եւ անմահ Պատարագին, հաղորդակից ըլլայ Ս. Խաչի տօնի խորհուրդին ու աղօթակից ըլլայ զոհերուն յիշատակին:

PRAYERS ON THE 10TH ANNIVERSARY OF THE 9/11 ATTACKS

Sunday, September 11, 2011, is the Feast of the Exaltation of the Holy Cross. Also on that day, we will join our fellow countrymen in somberly commemorating the 10th anniversary of the 9/11 terrorist attacks on the World Trade Centers, the Pentagon, and in Pennsylvania.

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, *Der Voghormya* (Lord, have mercy) prayers will offered during Divine Liturgy in all Prelacy Churches.

We invite our faithful parishioners to attend Divine Liturgy on Sunday to observe the Feast of the Exaltation of the Holy Cross pray for the souls of the nearly 3,000 victims who tragically lost their lives on that fateful day in New York, Washington D.C., and Pennsylvania.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ՉՈՐՇԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍԵՐԳ

Շաբաթ, 10 Սեպտեմբերին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ, շրջանի միջ-եկեղեցական խորհուրդին կողմէ կազմակերպուած է յիշատակի արարողութիւն մը, որուն ներկայ իպտի ըլլայ Նաեւ քաղաքապետական խորհրդուի Նախագահ Էրիք Կարսեթի:

Ընդառաջելով իրեն ուղղուած հրաւերին՝ Առաջնորդ Սրբազանը տնօրինած է, որ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան զինք ներկայացնէ այս

արարողութեան: Տեղի պիտի ունենայ մոմավառութիւն եւ գեղարուեստական յայտագիր:

Կիրակի, 11 Սեպտեմբերին, յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի «Լարք»ի երգչախումբի համերգին, որ կազմակերպուած է ի յիշատակ 11 Սեպտեմբերի զոհերուն յիշատակին, Արեւմտեան Թեմի Ազգ. Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց Տաճարին մէջ, Պըրպէնք:

9/11 COMMEMORATIVE EVENTS

On Saturday, September 10th, an event commemorating the 10th anniversary of the 9/11 attacks will bring together 500 Southern California congregations at the forecourt of City Hall in downtown Los Angeles. A representative from each congregation will light a lantern from a central flame to take back to his/her house of worship.

The event is organized by the Los Angeles Council of Religious Leaders and welcomed by Los Angeles City Council President Eric Garcetti, and will also feature prayers, remarks, and a musical program.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate.

On Sunday, September 11, a commemorative concert will be held at St. Leon Cathedral in Burbank presented by the Lark Musical Society. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate.

ՆՈՐԱԾՑ Տ. ՂԵՒՈՆԴ ԲՅՆՅ. ԲԻՐԱԶԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՅԷ ԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

31 Յուլիս 2011ին, մեր Թեմը հարստացաւ նոր հոգեւորականով մը, երբ Առաջնորդ Սրբազանը քահանայ ձեռնադրեց բարեշնորհ Նազարէթ Սրկ. Բիրազեանը եւ զայն վերանուանեց Տ. Ղեւոնդ Բահանայ:

Համաձայն մեր եկեղեցւոյ կանոններուն ու աւանդութեանց, նորած քահանայ հայրը այնուհետեւ ապրեցաւ քառասորեայ առանձնութեան, պահեցողութեան ու հոգեկան պատրաստութեան շրջան մը:

Կանոնական այս շրջանը աւարտած է եւ Տ. Ղեւոնդ Բահանայ Շաբաթ, 10 Սեպտեմբերին, երեկոյեան ժամը 5:30ին, Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ պիտի մատուցէ իր անդրանիկ Ս. Պատարագը, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր: Տեր Հայրը նշանակուած է Բրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ ու այնուհետեւ պիտի ծառայէ ծխական այս շրջանին: Կիրակի, 11 Սեպտեմբերին, Ս. Խաչի Վերացման տօնին, Ս. Պատարագ պիտի մատուցանէ եկեղեցւոյ մէջ:

NEWLY ORDAINED FR. GHEVONT KIRAZIAN TO CELEBRATE HIS FIRST DIVINE LITURGY

On Saturday, September 10, by the ordinance of the Prelate, newly ordained Priest Rev. Fr. Ghevont Kirazian will celebrate his first Divine Liturgy and deliver the sermon at the Crescenta Valley Parish. The service will be held at the Prelacy beginning at 5:30 p.m.

Fr. Ghevont was ordained into the priesthood by the Prelate on July 31st at St. Mary's Church in Glendale. He has spent the past 40 days in solitude and reflection, as is the tradition for newly ordained priests and will now begin his service as the Pastor of the Armenian Apostolic Church of Crescenta Valley.

On Sunday, September 11, the Feast of the Exaltation of the Holy Cross, Fr. Ghevont will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Crescenta Valley Parish. Divine Liturgy is held at the Prelacy and begins at 11:00 a.m.

Ս. ԳՐՈՅ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅԵՐԸ ԿԸ ՎԵՐՍԿՍԻՆ

Յառաջիկայ շաբաթ կը վերսկսին Թեմիս եկեղեցիներու երիտասարդականի եւ Ս. Գրային սերտողութիւններու պահերը, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ վարիչներուն՝ Գերպ. Տ. Սիւռն Ճ. Վրդ. Ազնիկեանի, Յոգձ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն եւ Գրիգոր եղբայր Սսըրլեանի:

Յայտնենք, որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Եղբայրակցութեան կազմակերպած սերտողութիւնները եւս պիտի շարունակուին Թեմիս կարգ մը եկեղեցիներուն մէջ:

Մանրամասնութեանց համար կարելի է կապ հաստատել մեր եկեղեցիներու գրասենեակներուն հետ:

BIBLE STUDIES RESUME IN PRELACY PARISHES

Following summer break, next week Bible Study sessions will resume in our parishes. The sessions are led by Prelacy Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Pastors, Brother Krikor Misserlian and the Armenian Ecclesiastical Brotherhood.

Please contact your local church office for further details.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ

ԻՐԱՆԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Երեքշաբթի, 6
Սեպտեմբերի յետմիջօրէին,
Թեմիս բարեխնամ
Առաջնորդ Բարձր. Ս.
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Ազգային Առաջնորդարանին
մէջ ընդունեց այցելութիւնը
Լոս Անճելըսի Իրանահայ
Միութեան
Ներկայացուցիչներուն՝
Տեարք Նժդեհ Փիրճանեանի
եւ Թոմիկ Ալեքսանեանի:
Հանդիպումին ներկայ եղաւ

Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան:

Հիւր ներկայացուցիչները եկած էին Առաջնորդ Սրբազանին հաղորդելու միութեան գործունեութեան կարգ մը մանրամասնութիւնները, մանաւանդ, որ աշխատանքը նոր թափ ու ծաւալ ստացած է միութեան նորակերտ կեդրոնին բացումէն ետք: Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Իրանահայ Միութեան գործունեութեան մասին, որ կ'իրագործուի վարչական պատասխանատուներու թէ անդամներու նուիրեալ աշխատանքով:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու նաեւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յառաջիկայ հովուապետական այցելութեան մասին, նկատի ունենալով, որ Միութիւնը նախապէս հրաւեր ուղած էր իր նոր կեդրոնին մէջ հիւրընկալելու Վեհափառ Հայրապետը եւ ստանալու անոր օրհնութիւնը: Միութիւնը կը ծրագրէ կազմակերպել գեղարուեստական երեկոյթ մը, ապա նաեւ պատշաճ ընդունելութիւն-հիւրասիրութիւն:

Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն յայտնեց հրաւերին ու նախատեսուած յայտագիրին մասին, ու հաստատեց, որ Հովուապետական այցելութեան կազմակերպիչ մարմինները ժամանակացոյցին մէջ նկատի պիտի ունենան միութեան խնդրանքը:

PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES

On Tuesday, September 6, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Society of Los Angeles Mr. Njeh Pirjanian and Mr. Tomik Alexanian. Executive Council Chairlady Mrs. Rima Boghossian participated in the meeting.

The representatives had come to the Prelacy to discuss the organization's current activities, which have recently expanded following the completion of their new center.

Also discussed was the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I. The Armenian Society of Los Angeles had previously extended an invitation to welcome His Holiness to their new center and receive his paternal blessings, and plan on organizing a cultural event and a fitting reception.

The Prelate commended the work of the organization and its members, and informed the representatives that the Pontifical Visit organizing committees will take into consideration their request upon review of the Pontifical schedule.
